

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ԵՄԵԴՆՄԻ ԳՅՈՒՊԵՏԱՐԱՆ

Գ. Եղեգնուտ հեռ. 093 18 76 56

Թիվ_95

« 15 » Դուլիսի 2013 թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ԳԱՀՐԱՍՆԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է Եղեգնուտի գյուղական համայնքի ընդհանուր ժողովի թիվ 01 արձանագրությունը, կայացած՝ 15.07.2013 թվականին:

Առդիր՝ 2 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ

Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Արձանագրություն թիվ 01

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովի նիստի կայացած՝ 15.07.2013թ. ժամը 14⁰⁰ – ին:

Նախագահությամբ՝ Ռ. Մարգարյանի
քարտուղարությամբ՝ Ս. Ալեքսանյանի

Ընդհանուր ժողովին մասնակցում էին համայնքի բնակչության 65 անդամներ:
Ներկա էր Արմավիրի մարզպետարանի գյուղվարչության պետի տեղակալ՝ Վ. Աբրահամյանը, ավագանու 5 անդամներ, Եղեգնուտի համայնքի ղեկավարի Աշխատակազմը:

Օրակարգում.- Եղեգնուտի համայնքի ղեկավարի 2013թ-ի I կիսամյակի հաշվետվությունը կատարած աշխատանքների մասին:
Զեկ. Ռ. Մարգարյան (համայնքի ղեկավար)

Զեկուցողը մանրամասը ներկայացրեց I կիսամյակում կատարած իր աշխատանքների մասին, մասնավորապես նշելով համայնքի 2013թ. համայնքային բյուջեի կիսամյակի արդյունքները, ինչպես մուտքային, այնպես էլ ծախսային մասով:
Այսպես՝ 07.01.2013թ. – 01.07.2013թ. ընկած ժամանակաշրջանում համայնքի բյուջե մուտքագրվել է 15673.8 հազ. դրամ որը կազմում է 108.4 %, իսկ ծախսային մասը կազմում է 10255.9 դրամ, որը կազմում է բյուջեով նախատեսված ծախսերի 64.6 % - ը:

Մուտքագրվել է՝

	պլան փաստացի կատ % / հազ. դրամ/	
1. հողի հարկ	800.0	731.8 91.5
2. գույքահարկ	1050.0	1144.4 108.9
3. հողի վարձավճար	150.0	143.4 93.3
4 տեղական տուրքեր	15.0	15.0 100.0
5. այլ ոչ հարկային եկամուտներ	400.0	1589.9 397.0
6. պետական բյուջեից ստացվել է <u>դոտացիա</u>	12049.3	12049.3 100.0
Ընդամենը եկամուտներ՝	14464.3	15673.8 108.4

Այսպիսով բյուջեի կատարողականը կազմում է 108.4% :

Վճարվել է՝

	/ հազ. դրամ/
1. աշխատավարձ	6477.0,
2. գրասենյակային և գրենական ապրանքներ,	200.0,
3. օգն. սոց. անապ. ընտանիքներին,	470.0,
4 կապի ծառայություններ,	77.0,
5. էներգետիկ ծառայություններ,	1035.9.0
6. Մշակույթային միջոցառումներ,	200.0,
7. տեղեկատվական ծառայություն,	107.6,
8. տրանսպորտային նյութեր ,	1233.4
9. համակարգչային ծառայություններ,	35.0
10. Հատուկ նպատակների այլ նյութեր	400.0:

Նշվեց նաև, որ համայնքում առկա են հետևյալ խնդիրները՝

1. մանկապարտեզի շենքի ներսում մասնակի վերանորոգման աշխատանքների ավարտում և մանկապարտեզի նոր գույքի ձեռքբերում,
2. համայնքի փողոցների լուսավորության անցկացում,
3. ոռոգման ջրի հիմնախնդիրների լուծում,
4. Խմելաջրի վիճակի բարելավում և նոր խորքային հորի հորատում:

Արտահատվեցին – Վ. Սիմոնյանը / Աշխատակազմի գլխ. մասնագետ/,
 Է. Աբրահամյանը / ավագանի/, Վ. Մարգարյանը / ավագանի /,
 Ե. Կարապետյանը / սեփականատեր /, Լ. Գևորգյանը / սեփականատեր/:

Ելնելով վերոգրյալից եղեգնուտի համայնքի ընդհանուր ժողովը

ո ղ ո շ ու մ է՝

1. Համայնքի ղեկավարի 2013թ. I կիսամյակի կատարած աշխատանքները գնահատել բավարար:
2. Առաջարկել համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյանին և գլխ. մասնագետ՝ Վ. Սիմոնյանին՝
 - 1) ապահովել իրավաբանական անձանց հարկային մուտքերը գույքահարկի և հողի վարձավճարների մասով ապահովվել 100% - ով,
 - 2) ֆիզիկական անձանցից գանձումները հողի հարկի, վարձավճարների և գույքահարկի մասով ապահովել 100% - ով,
 - 3) ձեռնարկել համապատասխան ծրագրային միջոցներ, ներդրումների միջոցով ապահովել համայնքի հետագա սոցիալ – տնտեսական զարգացումը,
 - 4) բյուջեի կատարողականը հասցնել մինչև 100% :

Նախագահ՝

Քարտուղար՝

Ռ. Մարգարյան

Ս. Ալեքսանյան

գ.եղեգնուտ

15.07.2013թ.